

## Գլորդ ԱՅՎԱԶՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԵԿԵՂԵՑԻ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ 1860-1870-ական թթ.

Ալեքսանդրապոլ ուներ յուրօրինակ հասարակական միջավայր: Այն իր հիմնադրումից 1837թ., շորջ երկու տասնամյակ անց դարձավ Երևանի նահանգի առանցքային քաղաքներից մեկը, ուսու-թուրքական սահմանային շփման կարևորագույն հանգույց: Վերջին համազամբը տնտեսական խոստումնայից հաջողություններ էր կանխատեսում քաղաքի բնակչության համար, որը ներգրավված էր արհեստների, առևտուրի և սպասարկման ոլորտներում: Տնտեսական տեսակետից առևտուրական միջնորդի և մասնակիցի իր դերը Ալեքսանդրապոլին «ասիստում» էր զարկ տալ առևտուրին, քանի որ մի կողմից՝ բնակչության նեծաքանակությունն ու զորախմբային կուտակումները<sup>1</sup> ստեղծում էին զանազան ապրանքների սպառողական մեծ պահանջարկ, մյուս կողմից՝ քաղաքն իր համանուն գավառով օրյեկտիվիտեն չէր կարող բավարարել այդ պահանջարկ՝ դաշտավարության իր միօրինակ հնարավորություններով (գյուղատնտեսական արտադրանքը հիմնականում ցորենի և զարու տեսքով էր):<sup>2</sup> Առևտուրից ստացվող ֆինանսական հոսքերը նշանակալից դեր ունեին քաղաքի համար, ուստի, ի դեմս նրա ներկայացուցիչների, կարելի է ասել, որ գործ ունենք մի խավի հետ, որն իր ծեռքն էր Վեցըրել տեղական կառավարման համակարգում կարգավորչի գործառույթը և վերահսկում էր ներքաղաքային հասարակական տեղաշարժերը:

Արևորից բացի, քաղաքին հջակ էր բերում նաև արիեստավորական որակյալ արտադրանքը, որը կաշկանդված չէր տեղական շոկայի պահանջարկով և վայելուն էր ոչ միայն տեղացի գնորդների վստահությունը։ Ակեսանդրապոլի և նրա շրջակայքի բնակչությունը 1865թ. զբաղվում էր 59 տեսակի արիեստաներով, որոնցում ներգրավված 3594 վարպետներն ու ենթավարպետները զավածին տարեկան տալիս էին 19410 ռուբլու եկամուտ։<sup>3</sup> Նման իրավիճակը նպաստում էր քաղաքի բնակչության աստիճանական աճին և դրամական նույտերի ավելացմանը, որն 1872թ. 19891 ռուբլուց<sup>4</sup> 1879թ. հասել էր 36321 արծաթ ռուբլու։<sup>5</sup>

Տնօտեսական և սոցիալական բարփոր վիճակը պարարտ հոդ էր ստեղծում ակտիվ հասարակական կյանք ծավալելու համար: Ազգային հարուստ ավանդույթների ժառանգորդ ակերտանդրապոցին կամաց-կամաց սկսում էր դրւուր զայ ժամանակի ուղղութեան կողմանարութական սահմանահակածութեան շրջանակներուց:

Խնդրո առարկա ժամանակահատվածում առաջարկությունը պահպանվելու համար չի հաջարկվելուց հետո՝ Խնդրո առարկա ժամանակահատվածում Ալեքսանդրապոլի հասարակական կյանքը հիմնականում կենտրոնացած էր դպրոցներում, որոնք մեծ նաև նաև գործում էին եկեղեցու հովանակորությամբ։ Երևանի նախաճիշ մյուս քաղաքների հետ համեմատած դպրոցական գործն այսուղեւ բարձր էին դրվագությունը։ 1870-ական թվականների սկզբից զլասավորապես Ավետիք Քարայանի (հետագայում՝ նշանավոր թիշիկ) ջանքերի շնորհիվ քաղաքում սկսում են համախմբել այնպիսի հայտնի հասարակական գործիչներ ու կրթական կյանքի կազմակերպիչներ, ինչպիսիք են Սարգսի Քեցնա-

<sup>1</sup> Նախքան 1877-1878 թթ. ուս-բուրգական պատերազմ՝ 1876-1877 թթ. ձմռանը, զորքերի թիվը 34400 էր, իսկ պատերազմի ժամանակ հասավ 88220-ի (Отчетъ интенданта кавказской армии съ 1-го июня 1876 по 1-е июня 1878 года. Составилъ ген.-лейтенантъ Шульманъ, СПб, 1880, стр. 16, 25):

<sup>2</sup> Ծիրակը ոչ միայն Երևանի նահանգում, այլև ամրող տարածաշրջանում հռչակված էր իր հացախատությամբ:

<sup>3</sup> Վ. Արքան Խամբարտյանները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկզբունքը), Երև., 1971, էջ 55:

<sup>4</sup> Отчет по главному управлению наместника Кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краемъ. 6 декабря 1862-6 декабря 1872, Тиф., 1873 (приложение к главе 7-й. Ведомость о доходах и расходах городов Кавказского и Закавказского края за 1862 и 1872 годы).

<sup>5</sup> Յ. Գ. Եղիան Արքայից մինչև Ամի, «Փորձ», Թիֆլիս, 1880, N 4, էջ 79:

զարյանը, Հայրավետ Դուկասյանը, Գարրիել Տեր-Հովհաննիսյանը (Քաջրերունի), Արարաջյան Եղբայրները, Սարիրեկ Տեր-Մերժիսեղիկյանը, Աղարեկ Արշակունին, Սակար Տեր-Սարգսյանը, Պետրոս Հայկազունին և այլք: Վերջիններին արդյունավետ աշխատանքի համար արդեն նախադրյալներ ստեղծել էին 1860-ական թվականների ընթացքում այստեղ կազմակորչած տարրեր կամավորական ընկերությունները («Արմատ սիրո», «Ընթերցասիրական ընկերություն», «Որբախնամ ընկերություն», «Բարենպատակ ընկերություն» և այլն), որոնցում իրենց մասնակցությունն էին բերում նաև կանայք:<sup>6</sup> Թեև այդ ընկերություններն ունեին նպատակային տարրուղղված բևեռներ, այնուամենայնիվ, բոլորն էլ ձգուում էին ինչ-որ կերպ օգտակար լինել հասարակությանը: Փաստորեն, դպրոցը դարձել էր հասարակության նախաձեռնող տարրերի դրսևորման միջավայր. այստեղ էին կյանքի կոչվում թարմ ու նորովի գաղափարները, բախվում հասարակական տարրեր խնդիրների լուծման ուղիների որոնման վերաբերյալ մտահոգ մարդկանց կարձիքները:

Ինչպես հայտնի է, հայ իրականության մեջ 19-րդ դարի 50-70-ական թվականներին գերիշխող էին մի քանի հասարակական-քաղաքական հոսանքներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ գործունեության իր գաղափարական ասպարեզն ու շահերի արտահայտիչ լրագիրը: Ալեքսանդրապոլի հասարակական կյանքում բավական իիննավոր դեր էին կատարում պահպանողական գործիչները:<sup>7</sup> Սա, իհարկե, պատահական երևոյք չէր, քանի որ վաճառականական մեծագույնար միջոցներն ու մեծարիվ արհեստավորությունը դեպի իրենց էին ձգում ազգի հոգևոր-մշակութային խնդիրներով մտահոգ մարդկանց՝ նրանց համար ծառայելով նյութական սննդաման անհրաժեշտ աղբյուր: Բացի դրանից՝ հայ հասարակական-քաղաքական մտքի պահպանողական ուղղությունն այստեղ հասկանալիորեն ավելի ընդգրկուն էր ներկայացված այն պատճառով, որ, ինչպես իրավացիորեն նշում են մի շաբթ պատմարաններ, ազգային-պահպանողական հոսանքն արտահայտում էր Անդրկովկասի քաղաքային արհեստավորության և խոշոր առևտրականների շահերը,<sup>8</sup> իսկ Ալեքսանդրապոլի առևտրաարհեստավորական քաղաքը էր: Պահպանողականների գործուն ներկայության մյուս խթանիչ հանգամանքը քաղաքի հայաշունչ ոգին էր:

Պահպանողական գործիչների մեջ միմյանց հետ հարաբերություններում ամեն ինչ չէ, որ հարք էր ընթանում, և երբեմն զգալի սրությամբ քախվում էին նրանց տեսակետները՝ այս կամ այն հարցի հետ կապված: Նրանցից քչերն էին, որոնք լինելով ավանդականի կողմնակիցներ, այնուամենայնիվ, նրբորեն առանձնանում էին իրենց առաջադեմ հայացքներով: Միանգամայն համամիտ ենք հետագործող Մ.Միհրարյանի այն պերման հետ, թե համարինս ազգային-պահպանողականների ցարիզմը տեսնում էր առավել վստանգավոր գործիչների:՝ Հարցի նման դիտարկման տեսանկյունից հաջող օրինակ կարող է լինել հովանեսիական ու սուքիասական (մեր կարծիքով, Եկեղեցական և իշխանական) քերի միջև ընթացող և հասարակական մեծ հնչեղություն ստացած պայքարն Ալեքսանդրապոլում: Այն դրսարկեց հնարավորինս սուր, օգտագործվեց ժամանակի մամուլ՝ որպես ժողովրդի վրա ազդեցության հզոր գործոն: Եկեղեցի-պետություն լուր հակադրման պարագայում, երբ ցարական կառավարությունը հնարավոր բոլոր միջոցներով փորձում էր միջանտեղ Եկեղեցու ներքին գործերին, այս դեպքը կարող էր լրացնուի հաղթարուղը լինել պետության ձեռքին:

<sup>6</sup> «Արարատ», Էջմիածին (Վաղարշապատ), 1869, թիվ ե, սեպտեմբեր, էջ 112-118: «Հայկական աշխարհի կոռումկ», Թիֆլիս, 1865, N 8-9, էջ 351-355: Մ. Մաշտոցի անվան Սատենապարան, Կարողիկոսական դիվան, թիվ 224, լ 3, թ. 1-13: Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ): Կ. Կոստանդինի ֆոնդ, թիվ 450: «Սեպու Հայաստան», Թիֆլիս, 1872, N 43, 23 դեկտեմբերի, էջ 3-4; 1873, N 5, էջ 3:

<sup>7</sup> Հ. Գեղամյանի բնութագրման՝ քաղաքը գիշավորասես «մեղվական», ասել է թէ՝ ազգային - պահպանողական ուղղություն ուներ (տե՛ս նշվ. աշխ., էջ 75):

<sup>8</sup> Ա. Հ ա մ թ ա ր յ ա ն ն, Հայ հասարակական-քաղաքական միստք արևմտահայ ազատագրության ուղիների մասին (XIX.վերջ-XX.սկիզբ), Եր., 1990, էջ 7: Մ. Միհրարյան, XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Եր., 1976, էջ 26:

<sup>9</sup> Մ. Միհրարյան, Երևան, 1990, էջ 30:

Ալեքսանդրապոլի խոշոր առևտրականներն ու պետական պաշտոնյաների մի մասը բաժանվել էին երկու հակառակ թերթի: Իհարկե, հասարակական նման երկ-փեղկ-վածությունը չէր խոսում հօգուտ գերակա նպատակի՝ եկեղեցու, միևնույն է թէ՝ կրթանշակութային կյանքի հաջող ընթացքի: Հովսեփականները (Թաղլուս Տիգրանյան, Ավետիք Քարայան և այլն) Հովսեփ ավագ քահանա Կոստանյանի, իսկ սուրբասականները (Կարապետ Անանիկյան, Աքրահան Ունչյան, Հարություն Վանեցյան և այլն)՝ Սուրբիաս վարդապետ (Խետագյում եպիսկոպոս, ապա՝ արքեպիսկոպոս) Պարզյանի կողմնակիցներն էին: Ըստ եռորյան, երկուսն էլ ազգային - պահպանդական ուղղության ներկայացուցիչներ էին: Հ. Կոստանյանը գրեթե երկու տասնամյակ պատաժանատու պաշտոններ էր վարուս Ալեքսանդրապոլում. նա «Հառիճի վանական ընկերության» հիմնադիր-նախագահն էր, 1862-1872թ. գրադեցնում էր Հոգևոր վիճակային դպրոցի հոգաբարձուի պաշտոնը և միաժամանակ հոգևոր կառավարության անդամ էր, մեծ ներդրում ուներ Արդուրյան օրինրական դպրոցի բացման ու նրա հետագա լինելությունն ապահովելու գործում, ընդհանրապես ծանրակշիռ ավանդ ուներ քաղաքի հոգևոր-մշակութային կյանքի ակտիվացման մեջ: Ահա թե ինչպիսի խոտանած գույներով է վերջինիս ներկայացնում այդ տարիներին Ալեքսանդրապոլում ուսուցչություն արած մեծ գրող՝ Աղայանը. «Աղաներին կարողացել էր ձեռքն առնել Տեր - Յովսեփ Կոստանեանցը և դառնալ մի անհաջի և անսահման իշխան: Մրա դիկտատորութեան ժամանակ վարժապետներն էլ միեւնոյն խալիքաններն էին, ինչ որ Ախալցխայում բոլորն էլ իր տան սպասաւորներն էին»:<sup>10</sup>

Սուրբիասականները ներկայացնում էին Սուրբիաս Պարզյանի շահերը: Վերջինս 1872-1877թ. ընդմիջումներով գրադեցնում էր Ալեքսանդրապոլի վիճակի առաջնորդական փոխանորդի պաշտոնը, մինչ այդ եղել էր Թիֆլիսի կոնսուլտորիայի անդամ, ապա՝ Ախալցխայի հոգևոր առաջնորդ, որտեղ բարի համբավ էր վայելուն տեղի ժողովրդի շրջանում: Այս երկու թերթի միջև ընթացող պայքարը շուրջ իինգ և ամելի տարիներ գրադեցրեց Ալեքսանդրապոլի բնակչության ուշադրությունը: Չուտ հասարակական խնդիր լինելուց բացի, այն ուներ նաև քաղաքական որոշակի նրբերանգներ, այսինքն՝ ավելին էր իր նշանակությանը, քան աշխարհիկ և կուսակրոն հոգևորականների միջև ծագած սովորական վեճը:

1857-1875թ. հիշյալ հոգևորականների հարաբերությունները շատ ջերմ էին. «(Սուրբիաս Պարզյանը)... համակրում էր ընկերութեան նախագահի (Հ. Կոստանյանի - Գ.Ա.) բոլոր հասարակական գործողութիւններին և պարծենում էր նորա բարեկամութեամբ»:<sup>11</sup> Այդ մտերմությունը սկիզբ էր առնում 1857թ. և ավելի սերտացավ 1870թ., երբ Էջմիածնի սինողի կողմից Հ. Կոստանյանը որպես քննիչ ուղարկվեց Ախալցխա՝ Ս. Պարզյանի և քաղաքի ունելոր վերնախավիլ (աղաների) միջև ծագած անհամաձայնության պատճառները պարզելու նպատակով: Արդյունքում՝ Ս.Պարզյանը տեղափոխվում է Ալեքսանդրապոլ և 1872թ. հոկտեմբերի 13-ին նշանակվում Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակի փոխանորդ:<sup>12</sup> Ս. Պարզյանը Ախալցխայում ճանաչվել էր իր իր ուսումնաշահ գործունությամբ և այնուղե սկսած հոգևոր-հասարակական բարեփոխումները շարունակեց Ալեքսանդրապոլում՝ արժանանալով քաղաքացիների անկեղծ համակրանքին: Օգտակար կարգադրություններից կարելի է հիշատակել մի քանիշը, օրինակ՝ նա արգելում է եկեղեցում ֆես դնել,<sup>13</sup> զերեզմանատանը ննջեցյալների համար հացկերույթ տալ,<sup>14</sup> անվանակոչության և տոնական օրերի մատադի փոխարեն կոչ է

<sup>10</sup> Ղ. Աղայ եա մ ց, Իմ կյանքի գիշատոր դեպքերը, Թիֆ., 1893, էջ 140:

<sup>11</sup> Հառիճայի վանական ընկերութեան յիշատակարանն ու հաշիր 1850-1882թ., յաւելուած 1882-1898թ., Աղեքսանդրապոլ, 1909, էջ 108: Նաև՝ մինչև 1875թ. նրանց նամակագրությունը (տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ) ֆ. 779, գ. 1, գ. 27):

<sup>12</sup> Ստ. Գառան ճանակ, Դեյտելի արմանակարգություններից կարելի է հիշատակել մի քանիշը, օրինակ՝ նա արգելում է եկեղեցում ֆես դնել, զերեզմանատանը ննջեցյալների համար

<sup>13</sup> «Սլաղ Հայաստան», 1875, N5, 8 փետրվարի, էջ 2:

<sup>14</sup> Յուսիկ վարդապետ Սովորսեան, Իմ նկատողութիւնները. Ալեքսանդրապոլից Ղարս, «Արարատ», 1883, թիվ Ա-Բ, էջ 41:

անում դրանց վրա ծախսվող գումարները տալ աղքատանոցին,<sup>15</sup> խստորեն պարտադրում, որ քահանաներն անպայմանորեն ներկա գտնվեն ժամեզրությանը և այլն:

Նախքան Հ. Կոստանյանի հետ ունեցած ընդհարումը, 1874 թվականից արդեն Ս. Պարզյանի գործողություններում նկատվում են հոգևոր բարձրագույն իշխանությանը հակադրման երևոյթներ, որոնք իրենց արտացոլումը գտնան Ալեքսանդրապոլի հասարակական կյանքում:<sup>16</sup>

Վերոհիշյալ երկու հոգևորականների փոխհարաբերություններում ակամա փոփոխություններ նշան 1876 թվականից՝ Ալեքսանդրապոլու նորաշեն Ամենափրկիչ Եկեղեցու օծումից յետոյ 1876-ին»:<sup>17</sup> Ս. Պարզյանը գտնվում էր Մակար արքեպիսկոպոսի ուժեղ ազդեցության տակ և յուրաքանչյուր փոփոխություն, որ կապված էր Վերջինիս հետ, արտացոլվում էր նաև Սուրբիասի գործողություններում: 1876թ. Սակար արքեպիսկոպոսն ազատվում է Թիֆլիսի հոգևոր առաջնորդի պաշտոնից ու նշանակվում Նոր Նախիջևանի և Թեսարաքիայի թեմի առաջնորդ:<sup>18</sup> Պաշտոնազրկումից հետո Մակարն անօրինակ հարձակում է սկսում կաթողիկոսի դեմ՝ նաև ավանդության, իր շա-

<sup>15</sup> «Սեղու Հայաստանի», 1873, N25, 7 հուլիսի, էջ 3: 1874, N8, 23 փետրվարի, էջ 4:

<sup>16</sup> Հայունի է, որ 1874թ. քացլում է Էջմիածնի Գևորգյան ժնմարանը: Սուրբ Պարզյանը Ալեքսանդրապոլի հաջորդությանը զուգահեռ զրադեշնում էր նաև Ժնմարանի տեսչի օգնականի պաշտոնը (Հայիճայի վաճական ընկերության յիշատակարանն ու հաշիր, էջ 109): Երբ տեսուչ նշանակվեց Գար. Այվազյանը, նաև ազատվեց իր այդ պաշտոնից ու հավանաբար, լուրջ հավակնություններ ուներ տեսուչ դաշնապետ: Նրա այդ գտումը պարզորդ երևում է քաղաքի Հոգևոր վիճակային դպրոցի տեսուչ Ս. Քեզմազարյանի հետ ունեցած հարաբերությունների վատանար հաճախանքից, որը դրսությաց նախ Արդույամ իգական դպրոցի հոգաբարձության ընտրությանների ժամանակ (Հարաբերությունների վատանան դրսուրման մյուս դեպքի մասին «Սեղու Հայաստանի», 1873, N 50, գեղանեմբերի 3, էջ 29; 1874, N3, 19 հունվարի, էջ 2-3; N 4, 26 հունվարի, էջ 2-3). Հոգաբարձությունը համար յունեների թվում առաջադրվել էր նաև Ս. Քեզմազարյանը, սակայն Սուրբ Պարզյանը, իրեն նախազան հոգաբարձության, շիաստատես վերջինս թեկնածությունը նշելով, թե նոյնիսկ նրա ընտրվելու դեպքում էր չի ներկայացնի հաստատության («Մշակ», Թիֆլիս, 1874, N23, 13 հունիսի, էջ 2-3; «Սեղու Հայաստանի», 1874, N26, էջ 2): Միջադեպի պատճառը, թերևս, Ս. Քեզմազարյանին Վահրամ վարդ Սանկունու հարցադրումն էր ժնմարանի տեսչի համար, թե ինքը ում կուգենար տեսնել տեսչության պաշտոնում, և Քեզմազարյանը, հավանաբար, Ս. Պարզյանը թեկնածության առիրով դրական պատասխան էր տվել: Ընդհանրապես այս առաջադեմ ուսուցչի գործունեությունն Ալեքսանդրապոլում հենց սկզբից արժանանում էր ոչ պատշաճ վերաբերմունքի, այդ են վկայում Արդույամ դպրոցում գերմաներենի դասավանդման նախականական արտադրության («Սեղու Հայաստանի», 1871, N14, 27 մարտի, էջ 86; N32, օգոստոսի 28, էջ 252-253; 1872, N12, 20 մայիսի, էջ 47-48: «Հայկական աշխարհ», 1871, N 4-5, ապրիլ-մայիս, էջ 97-98) և Հոգևոր վիճակային դպրոցում ուսուցչին իրեն և ցած զցելու (իրականում միայն իրենու) («Սեղու Հայաստանի», 1872, N34, 21 հոկտեմբերի, էջ 135-136) հետ կապված դեպքերը (Նույն տեղում, N30, էջ 119; N31, 30 սեպտեմբերի, էջ 122-123): Վերջին դեպքը ազգային-պահպանական ուրդվածություն ունեցող «Սեղու Հայաստանի» թերթի թրակիցը քննորոշում է որպես սակավարիլ «կոսակցության» ներկայացուցիչների կողմից տարածած տեղեկություն, որն աշխատում է ամեն կերպ վատարանել Քեզմազարյանին («Սեղու Հայաստանի», 1874, N3, էջ 2-3): Այս հարցում քացառված էր կարող լինել պաշտոնական իշխանությունների մասնակցությունը, քանի որ նրանց համար անցանկայի էր դպրոցների չափից ավելի բարզավանում ու ընդարձակումը (Վ. Երկանյան, Պայքար նոր դպրոցի համար Անդրկոլլաստում (1870-1905), Եր., 1970, էջ 48):

Որոշ խնդիրների պատճառով մոտ մեկ տարի Ս. Պարզյանը գտնվում էր Էջմիածնում: Այս ընթացքում Ալեքսանդրապոլի հասարակությունը երկու խնդրագիր է տալիս Վեհափառիմ՝ ցանկանով իր հաջորդի վերաբարձը («Սեղու Հայաստանի», 1875, N 48, 13 գեղանեմբերի, էջ 1), քանի որ խոսակցություն կար, թե նա կարող է նշանակվել Համայնքու վիճակի հաջորդ: Ի վերջո 1875թ. վերջին Սուրբ Պարզյանը երկրորդ անգամ է ստանձնում Ալեքսանդրապոլի վիճակի փոխանորդությունը արդեն որպես եպիսկոպոս («Սեղու Հայաստանի», 1875, N 45, 22 նոյեմբերի, էջ 2-3; Հայիճայի վաճական ընկերութեան յիշատակարանն ու հաշիր, էջ 109: Տր. Գարիբ-Ճական, նշվ. աշխ., էջ 112):

<sup>17</sup> Հայիճայի վաճական ընկերութեան յիշատակարանն ու հաշիր, էջ 110:

<sup>18</sup> Վահրագրեր հայ եկեղեցու պատճենքան, գիրք ծգ. Կարապետ եպիսկոպոս Տէր Սլյուշեան (1866-1915), Եր., 2006, էջ 495:

հերիմ ծառայեցնելով «Մեղու Հայաստանի» թերքը,<sup>19</sup> որի խմբագրից 1876 թվականից ազգային-պահպանողականները երես են թերու։<sup>20</sup> Նոյն թվականի օգոստոսի 2-ին Ալեքսանդրապոլի փոխանորդը կարողիկոսից պահանջում է 500 ոռորդով ավելացնել իր տարեկան աշխատավարձը։<sup>21</sup> Տարբեր ճանապարհներով Մակարը փորձում էր սառեցնել հավատարիմ մարդկանց վերաբերմունքը դեպի կարողիկոս ու առ Էջմիածին, պահանջում վերջիններիս դարձնել հաշվեռու։<sup>22</sup> Ինարկե, հաշվետվորյուն պահանջելու գաղափարը առաջադիմական էր, սակայն դա չպետք է ունենար «կուսակցական» դրդապատճառ։ Նմանատիպ պահանջով արշավ սկսվեց նաև Հովսեփ Կոստանյանի հոգածության ներքո գտնվող «Հային վաճական ընկերության» և դպրոցի դեմ։<sup>23</sup>

Հովսեփ քահ. Կոստանյանը հովանավորվում էր կարողիկոսի մտերիմ, վատահամբաւ Վ. Մանկունու կողմից, որը վեհականի հիվանդության պատճառով փաստունն իրականացնում էր նրա գործառույթները, իսկ Սուրբիաս Պարզյանը վայելում էր Թիֆլիսի հոգևոր առաջնորդ Մակար արքեպիսկոպոսի (հետագայում՝ կարողիկոս) հովանավորությունը, որի նկատմամբ ցարական իշխանություններն ընդգծված քայլացկան վերաբերմունք ունեին։ Ենթադրելի է, որ Ս. Պարզյանի և Հ. Կոստանյանի միջև վեժի հետևում թաքնված էր Մակար արքեպիսկոպոսի՝ որպես օրինական իշխանությունների շահերի արտահայտչի և կարողիկոս Գևորգ IV-ի ու նրա բարեկան Վ. Մանկունու միջև ընթացող պայքարը։ Այսինքն՝ Ալեքսանդրապոլի հայտնվել էր պետություն-նկաղեցի հարաբերությունների տիրույթում, մինչեւ խորհրդահայ պատմաբան Վ. Պարսամյանը այս պայքարը բնորոշել է որպես հետադիմական ուժերի դեմ ժողովրդավարական ուժերի մղած պայքար։<sup>24</sup>

Ազատագրական խմբակի գոյության և բացահայտման փաստը ցարական կառավարության շրջանում առանձնակի վերաբերմունք էր ձևավորել Ալեքսանդրապոլի հասարակության քաղաքական կողմնորոշման հանդեպ։ Բնական է, որ կառավարությունը ցանկանում էր, հասարակության ուշադրությունը շեղելով, «ապահովագրել» իրեն հնարավոր վճարակար զարգացումներից և այդ նոտարությունը խորանանկորեն իրականացրեց նշանակած հոգևորականների միջոցով։ Թեև Ս. Եպիսկոպոս Պարզյանը կարծ ժամանակով ազդեցության տակ ընկալ, այնուամենայնիվ մնաց իրեն եկեղեցուն նվիրյալ ու նրա բարեկարգության ջերմ պաշտպան։ Այդ է վկայում ցարական իշխանությունների կողմից նրա երկու անգամ աքսորվելը։<sup>25</sup>

Վեճը բորբոքվում էր, ամենայն հավանականությամբ, պետական իշխանությունների «ծրագրի» համաձայն՝ նախապատերազմական շրջանում վտանգավոր զարգացումներից խուսափելու նպատակով, որը նաև ազգային ինքնազիտակցության զարթոնքի վերելքը կանխելու միտում ուներ։ Ժամանակի հայկական մասնությ սկսեց որորվել Ալեքսանդրապոլից տեղացող «վրիսիկներով», որոնց մի մասը հանդես էր գալիս ի պաշտպանություն Հովսեփ Կոստանյանի, իսկ մյուսները՝ Սուրբիաս Պարզյանի։ 1870-ական թվականները համընկնում էին ընդդեմ «մշակական» ուղղության «մեղվական» կուսակցության ձևավորման հետ, <sup>26</sup> և այդ հակամանքը չէր կարող չազդել լարվածությանը վերաբերող Ալեքսանդրապոլից ստացված թղթակցությունների մեկնաբանման վրա։ Լիբերալ «Մշակ» այս պայքարի ներկայացման գործում համես էր գալիս չեղոք դիրքերից (որոշ շեղումներ, այնուամենայնիվ, եղան)՝ զիտակցելով Ալեք-

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ.779, գ.1, գ.55, թ.20:

<sup>20</sup> Ս. Մինիք արյան նշան, թշ 89-90:

<sup>21</sup> Սա ու են ադամ արյան, Կարողիկոսական դիվան, թղթ. 201, վկ. 229, 255:

<sup>22</sup> ՀԱԱ, ֆ.779, գ.1, գ.55, թ.20:

<sup>23</sup> «Մեղու Հայաստան», 1873, N33, 1 սեպտեմբերի, թշ 2-3: 1877, N3, 22 հունվարի, թշ 3: 1878, N44, 11 սեպտեմբերի, թշ 1-2: N 45, 18 սեպտեմբերի, թշ 2: N47, 2 դեկտեմբերի, թշ 3: «Փորձ», 1879, N1, հունվար, թշ 214-226: «Նոր դար», Թիֆլիս, 1886, N 68, 9 մայիսի, թշ 2:

<sup>24</sup> Վ. Պարզյանը ժամանական գործը Ալեքսանդրապոլում, Եր., 1936, թշ 77: «Մեղու Հայաստան» 1877թ. N 10-ում (12 մարտի, թշ 1-2) մեղադրվում է Էջմիածինը, որն աչք է փակում հոգևորականների կողմից ժողովրդի կրած նեղությունների վրա։

<sup>25</sup> Ծ. Ղարիբ ճահան նշան, նշան, թշ 113:

<sup>26</sup> Ս. Մինիք արյան նշան, նշան, թշ 67:

սանդրապոլմ երկու «վուսակցութեան» գրյության փաստը,<sup>27</sup> միևնույն ժամանակ քնակչությանը հորդրելով շետևել հոգևորականների «ֆնտրհօգաններին», հեռու մնալ այդ տեսակ երկառակություններից, որոնց արդյունքում հասարակությունը բաժանվել էր երկու անհաջող բանակների:<sup>28</sup>

Ալեքսանդրապոլի հասարակությունը, որի «հասարակական նախաձեռնությունն ու հետաքրքրությունը կազմավորված ավանդությներ ուներ»,<sup>29</sup> դեպքերի լոկ դիտող չէր, այլ գործուն նախակից ու ծանրակշիռ գործոն, որի կարծիքն ամեն դեպքուն հաշվի էր առնվազ: Հակասություններն այնքան էին սրբել, որ Էջմիածնի սինոդը վեճի կապակցությամբ Սուրբիաս Պարզյանի դիմումների համաձայն՝ հասուլ քննիչներ է ողարկում Ալեքսանդրապոլ (Անդրեաս Եպիսկոպոս և կոնսիստորիայի անդամ Աստվածատոր ավագ քահանա Խսահակյան), որպեսզի պարզեն Հովսեփի «Վնասակար գործողութիւնների» ընթացքը:<sup>30</sup> Սակայն, սրանք Հովսեփ Կոստանյանի օգտին իրենց կողմնապահ մոտեցումով ավելի են սրում իրավիճակը: Հասարակությունը պահանջեց դադարեցնել քննությունը, Սուրբիասը հրաժարվեց պատասխաններ քննիչների հարցերին:<sup>31</sup> Հասարակության անունից սուրբիասականներն ամեն կերպ ճգոտում էին քննությանը նախակից դարձել առևտրականներ Հ. Զիբողյանին, Հ. Վանեցյանին, Ա. Քարայանին և Ա. Ունչյանին: Սակայն Էջմիածնին մերժում էր այդ՝ պատճառաբանները, թե աշխարհականներն իրավունք չունեն նախակցելու եկեղեցականների գործերին:<sup>32</sup> 1877թ. մարտի 19-ին տեղի ունեցած արիեստավորների և առևտրականների ներկայացուցիչների ժողովը որոշում է դիմել կարողիկոսին՝ իրենց ներկայացուցիչներին նախակցության իրավունք տալու խնդրանքով: Քաղաքացիները վեհափառին երկու խնդրագիր են ներկայացնում՝ 1877թ. մարտի 6-ի և մարտի 20-ի թվագրմամբ:<sup>33</sup> Այս վերջինն առանձնանում է իր համարձակ բռվանդակությամբ: Քաղաքացիները նշելով, որ պատգամավորներ ունենալու վերաբերյալ իրենց խնդրանքը հարգվելու կարիք ունի, կարողիկոսին առաջարկում են փոփոխություն կատարել 1836թ. կարգադրության մեջ: Կրանում թեև չի ասվում, թե «ժողովրդի հոգևոր գործոց քննութեան մեջ ինքը՝ ժողովրդը հարկը պահանջած միջոցին կարող է որպասի և ից միջամտութիւն ունենալ հասպա արգելք և չկայ դրուած ժողովրդեան առջև՝ արդարութիւնն անսխալաբար լոյս ածելու բաղճանքով և իրաւունքով գեր անաշառ և անխարդախ վկայի նախակցութիւնն ունենալ այնպիսի խնդիրների մեջ, որ չեն զուտ կրօնական, այլ հոգևոր հասարակական, այսինքն հասարակութեան իրաւունք կամ օգտին վերաբերեալ այնպիսի խնդիրներ, որոնց տեսչութիւնն հաւատացած է հոգևոր իշխանութեան»:<sup>34</sup> Խնդրագրում նաև կասկած է հայտնվում քննության ընթացքի վերաբերյալ և խնդրվում է վերադարձնել Սուրբիաս Եպիսկոպոսին, իսկ Հովսեփ Կոստանյանին, որը «փր անձնաշահ արարունքներով վերին աստիճանի գայրակիութեան և գրգռման առիք է եղել վիճակին Հայ ժողովրդեան», իր գործակիցներ Սարտիրոս քահ. Պողոսյանի և հոգևոր կառավարության քարտուղար Կարապետ Զանիելյանի հետ հետաքանի իրենց վարած «ազգային պաշտօններից»:<sup>35</sup> Մարտի 24-ին քննությունը տեղափոխվում է Էջմիածնի: Հավանաբար, կրթերը հանդարտեցնելու համար կարողիկոսը միտք է ունեցել Ս. Եպս. Պարզյանին կրկին վերադարձնել իր պաշտօնին, քանի որ 1877թ. մարտի 29-ի հետագրում հովսեփական մայոր Թագլսու Տիգրանյանը վեհափառին խնդրում էր, դադարեցնել եպիսկոպոսի վերադարձի հետ կապված խնդրի կատարումը:<sup>36</sup> Ապրիլի 22-ի հետագրից երևում է, որ ժողովուրդը դեռևս

<sup>27</sup> «Մշակ», 1877, N 10, 14 փետրվարի, էջ 4:

<sup>28</sup> Նույն տեղում, N 11, 17 փետրվարի, էջ 1-2; N14, 28 փետրվարի, էջ 3:

<sup>29</sup> Վ. Ե. Բ. կ. ա. ն. յ. ա. ն. աշխ., էջ 71:

<sup>30</sup> Քննական գործը՝ Սատենադարան, Կարողիկոսական դիվան, բոք. 230, վ. 221:

<sup>31</sup> Նույն տեղում, վկ. 308 -310:

<sup>32</sup> Սուրբիասի կողմնակիցները փորձում էին մտնել նաև «Հատիճի վաճական ընկերության» մեջ, բայց չեն ընդունվում («Սարու Հայաստանի», 1877, N3, 22 հունվարի, էջ 3):

<sup>33</sup> Սատենադարան, Կարողիկոսական դիվան, բոք. 230, վ. 221, բոք. 1-2, 18-19; ՀԱԱ, ֆ.56, գ.14, գ.8, բ.14-21:

<sup>34</sup> «Սարու Հայաստանի», 1877, N14, 16 ապրիլի, էջ 3:

<sup>35</sup> Նույն տեղում: Նաև՝ N 11, 19 մարտի, էջ 2:

<sup>36</sup> Սատենադարան, Կարողիկոսական դիվան, բոք. 230, վ. 311:

սպասում է իր խնդրագրի պահանջի բավարարմանը, նաև հոգված է այն լուրերից, որ Կոստանդնուպոլիսը պետք է վերադառնա, իսկ Սուրբիաս Եալիսկոպոսը մնալու է:<sup>37</sup>

Եկեղեցուն անհնազանդության համար Սուրբիասն հեռացվում է պաշտոնից, կարճում է նրա ռոճիկը, արգելվում է նրան մասնակցել Եկեղեցական հանդեսներին, շորջառ և փիլոն կրել և ուղարկվում է Գեղարդի վաճքի միաբնակություն, իսկ Հ. Կոստանդնուպոլիսը նկատմամբ մեղն մնութեցում է ցուցաքերպում. նա հեռացվում է միայն Ալեքսանդրապոլի հոգելոր կառավարության անդամությունից՝ պահպանելով քահանայագործության իրավունքը: Պարզաբնին իր օգնությունն է առաջարկում Երևանի նահանգավետը, սակայն, ի պատիվ իրեն, Եալիսկոպոսը հրաժարվում է իշխանությունների առաջարկն ընդունելուց: Այս դիպվածը ապացուցում է, որ, իրոք, այս ամենի մեջ անմասն չէին ցարական իշխանությունները, որոնք զգուշորեն վերահսկելով Եկեղեցու գործունեությունը, առիթը բաց չէին բոլոր միջամտելու նրա ներքին գործերին: «Մերու Հայաստանի» բերքը չի շտապում այս իրողությունները վերագրել «Նորին Օծութեանը»՝ կարողիկոսին՝ ջխտելով Վ. Մանկունու մասնակցության համարմանը:<sup>38</sup>

Կարելի է ասել, որ ցարական վարչակազմը Թիֆլիսում Մակար արքեպիսկոպոսի և Ալեքսանդրապոլում<sup>39</sup> նրա զաղափարակիր Սուրբիաս Եալիսկոպոսի միջոցով հասավ իր նախատակին, այսինքն՝ ժողովորին որքան հնարավոր է հետո պահել հասարակական գործերից, բոլոր բաց չէին բոլոր դեպի դպրոցն ու Եկեղեցին. «Մեր քաղաքը տէրը կորցրած բոստան է դաշիք. վեւ ինչ ուզէ, քաղէ կը»:<sup>40</sup>

1877-1878թթ. պատերազմական վիճակից պայմանավորված՝ առժամանակ դադարեցվում է գործի քննությունը, բայց չի մարտում հասարակության հետաքրքրությունը նրա հանդեպ, և պատերազմն ավարտվելուց հետո նորից բորբոքվում են կրթերը: Սա ուրվագծվում է հետպատերազմյան Ալեքսանդրապոլի հասարակական կյանքի օրինակով, երբ «կուսակցական» խնդիրները շարունակում են մեծ տեղ գրանեցնել ժողովուն գիտակցության մեջ:

1877թ. վերջերից վիրավորներին տեղափորելու նպատակով փակվում են թե՛ մասնավոր, թե՛ ծխական դպրոցները: Քայց քաղաքի հասարակությունը անտարբեր է մնում առ այս երկույթը, չնայած որ նոյն թվականի նոյեմբերի սկզբին խնդրագրի եր տվել կառավարությանը դրանք ազատելու պահանջով, իսկ վերջինս էլ բավարարել եր նրանց խնդրանքը՝ կարգադրելով ազատել դպրոցները: «Մերու Հայաստանի» լրագիրը դպրոցների փակման մեջ մեղն մեղնարդում է Հովսեփ Կոստանդնուպոլիս: «Տերտերը տեսաւ, որ ես բոլորի պատճառը վարժատներն են, էսոնց առաջն օր չառնուի առաջվա պէս չի կարելի գործել, արթը բան ու գործը երավ վարժատներու նեւն ընկերի: Հերու վարժատներն օր հիւանդանոց էրին, մեկէն հոգլոր կառավարութիւնը (հիշենք, որ Հ. Կոստանդնու հոգլոր կառավարության անդամ էր-Գ.Ա.) կօքէ հոգարածուներուն, թէ վարժապետներ արձակեցէք, ուսումնարանը էս տարի հիւանդանոց պիտի եղնի»:<sup>41</sup>

«Մօղնի Եալիսկոպոս» և «Ծիրակի Բիստմարկի» «հականարությունն» իր դրսեւորումը գտավ նաև արական և իգական դպրոցների հոգարածությունների ընտրության ժամանակ:

Արդության իգական դպրոցի հոգարածության գործունեության ժամկետները վաղուց լրացել են: Անհրաժեշտ էր նոր հոգարածուներ ընտրել: Ըստ դպրոցական կանոնադրության՝ 1878թ. հունիսի 18-ին ընտրվում է 40 պատգամավոր, որոնք հուլիսի 2-ին պետք է ընտրեին հոգարածուներին: Սակայն հոգլոր կառավարությունն այդ ընտրությունը վավերական չի համարտմ, որի առիթվ մասնակիցների կողմից լինում են դժգոհություններ, և Էջմիածնի հոգլոր վերադասն ուղարկում է Կարապետ Այվազյանին, որպեսզի նոր ընտրություններ անցկացնի: Նոյն տարվա հուլիսի 31-ին Սր Աստվածածին Եկեղեցուն նոր ժողով է հրավիրվում՝ 1500 հոգու մասնակցությանը: Այս ժողովին ներկա էին նաև կանայք. ներկայություն, որը ժամանակի համար մի ամօրինակ

<sup>37</sup> Նոյն տեղում, վ. 315:

<sup>38</sup> «Մերու Հայաստանի», 1877, N 17, 7 մայիսի, էջ 1-2:

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. 779, գ.1, գ.55, թ. 19-20:

<sup>40</sup> «Մերու Հայաստանի», 1878, N 13, 1 ապրիլի, էջ 3:

<sup>41</sup> Նոյն տեղում, N 37, 23 սեպտեմբերի, էջ 3:

Երևոյք էր: Հոգևոր դպրոցի հոգարարձուներ ընտրվում են Ա. Ամատունին, Պ. Զիբողյանը, Ստ. Անանիլյանը, Հ. Վանեցյանը, Պ. Հովհանջանյանը, Ա. Ունչյանը, իսկ Արդուրյան դպրոցի համար՝ Սարտ. քահ. Կարապետյանը, Ս. Միրզայանը, Կ. Անանիկյանը, Ն. Միրիմանյանը:<sup>42</sup> Ընտրություններում հաղթանակ տարան սոքիասականները: Հակառակ թեկ ներկայացուցիչները հեշտությամբ չընդունեցին ընտրությունների արդյունքները: Հովսեսի համախններից Ասոս Ափոյանը փորձեց ստվեր գցել ընտրությունների վրա՝ նշելով, թե դրանց ընթացքում իրեն փորձում էին ծնծել:<sup>43</sup> Այդ քայլով, ըստ «Սեղու Հայաստանի» քերի Ալեքսանդրապոլի բորբակից Հորիերի («Սեղու Հայկազունի») հովսեսիականները ճգոտում էին ապացուել, թե Ալեքսանդրապոլում դեռևս «կուսակցություն» կա, որպեսզի Վեհափառ չվերադարձներ Սուքիասին:<sup>44</sup>

Վերջապես նոր հաջորդին՝ Գ. Սուքենյանին հաջողվում է: «Իւր խոհեմ վարմունքով և կառավարչական հմտութեամք» վերջ դնել տարածայնություններին, որի համար կարողիկար նրան կնքել էր «իսապատրեան իրեշտակ» անվամբ:<sup>45</sup>

Այսպիսով, Ալեքսանդրապոլը նշանակահատվածում դարձել էր Եկեղեցու և պէտության հարաբերման ասպարեզ: Երկու հոգևորականների վեճում քողարկած էր Եկեղեցու և պէտության բարդ ու նրբին փոխհարաբերությունների ընթացքը:

Կովկասյան իշխանական մարմինները, կապված քաղաքում ազատագրական որոշակի գաղափարներ կրող խմբակի («Քարենապատակ ընկերություն») գործունեության բացահայտման հետ, առավել խստացրին իրենց վերաբերմունքը տեղի հայ բնակչության նկատմամբ: Սակայն, նախապատերազմական վիճակից դրվագ՝ լրացուցիչ բարդություններից խուսափելու նպատակով չղիմեցին կտրուկ միջոցների, այլ տեղաբնակների հայրենապիրական մղումները զապելու և նրանց ուշադրությունը դրանից շեղելու համար խելացիորեն օգուվեցին քաղաքում մեծ հետինակություն վայելող վերոհիշյալ հոգևորականների ընձեռած առիթից՝ սկզբնավորելով և անընիատ խորացնելով նրանց միջև լարվածությունը:

## АЛЕКСАНДРОПОЛЬ В СФЕРЕ ОТНОШЕНИЙ ГОСУДАРСТВО – ЦЕРКОВЬ В 1860-1870-ЫХ ГОДАХ

Резюме

Г. Айвазян

Этот промежуток времени для города ознаменовался экономическим развитием, что дало возможность его жителям активно заниматься общественной деятельностью. Центром общественной жизни Александровия являлись школы. Экономическое и общественное процветание способствовало тому, что население города начало осознавать необходимость освобождения армянского народа от чужеземного ига. Этому способствовала церковь, за деятельность которой правительство вело бдительный надзор. В статье подчеркивается, что царское правительство в Александровии старалось максимально ограничить распространение идей армянского освободительного движения среди горожан.

<sup>42</sup> Նշվածների գերակշիռ մասն առևտրականներ էին: «Սեղու Հայաստանի», 1878, N31, 12 օգուստոսի, էջ 2:

<sup>43</sup> «Մշակ», 1878, N 149: «Հոր-հերը հարորդում է («Սեղու Հայաստանի», 1878, N37, 23 սեպտեմբերի, էջ 2), որ նա վրանվել է դարձից»:

<sup>44</sup> «Սեղու Հայաստանի», 1878, N37, էջ 2:

<sup>45</sup> Կենազգութիւն Գէորգ արք-Եպիսկոպոս Սուլբենանցի, Տիկիսի, 1911, էջ 11: Չնայած այն հայորդումներին, թե Տեր-Հովսեսիան և Պարզյան «կուսակցությունները» հաշտվել են («Սեղու Հայաստանի», 1879, N52, 11 հունիսի, էջ 4: «Մշակ», 1879, N3, 18 հունվարի, էջ 3), լարվածությունը պահպանվում էր նաև 1879-1880թթ. ընթացքում («Մշակ», 1879, N 50, 12 ապրիլի, էջ 2: «Փորձ», 1880, N4, էջ 77), ընդ որում, ժողովրդի աջրում բավական ընկել էր հոգևորականների վարկը: